ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1 Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		3-րդ եռամսյակ, 2024թ.	3-րդ եռամսյակ, 2025թ.
1	**Դեղերի շրջանառություն**	9	10
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0*	0.6
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	3.7	4.7
4	**Աշխատանքային իրավունք**	6.5	9.9
5	**Աշխ. անվտանգություն**	2.3	4

*Ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ստուգումներ չեն իրականացվել՝ ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված:

1.2 Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

		ՑՈՒՑԱՆԻՇ (%)

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
(374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

	ՈԼՈՐՏ	3-րդ եռամսյակ, 2024թ.	3-րդ եռամսյակ, 2025թ.
1	**Դեղերի շրջանառություն**	9	10
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0*	0.3
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	3.7	4.7
4	**Աշխատանքային իրավունք**	6.5	9.9
5	**Աշխ. անվտանգություն**	2.3	4

*Ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ստուգումներ չեն իրականացվել՝ ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված:

1.3 Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները[1].

Չափորոշիչը գնահատվում է տարեկան կտրվածքով:

1.4 Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2695 իրազեկման միջոցառում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2413 միջոցառման դիմաց), ըստ վերահսկողության ոլորտների՝

	Դեղերի շրջանառություն		Բժշկական օգնություն և սպասարկում		Սանիտարահամաճ. անվտանգության ապահովում		Աշխ. իրավունք	
	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ
Միջոցառումների թիվ*	**29**	**27**	**35**	**79**	**135**	**521**	**982**	**787**

* *1281 միջոցառում ընդհանուր բնույթի են:*

Այդ թվում՝

- Թեժ գծով ստացված 2133 զանգերին խորհրդատվություն և պարզաբանում,
- 135 հրապարակում պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով,
- 26 հարցում ֆեյսբուքյան էջի միջոցով,

[1] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

- 1 նկարահանում-հաղորդման հյուր,
- 19 դասընթաց/իրազեկում՝ 1058 քաղաքացիների շրջանում,
- 381 խորհրդատվական գործունեություն:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումների իրականացման համար ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[2].

Չափորոշիչը գնահատվում է կիսամյակային կտրվածքով:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

Հրապարակվել է 64 հանձնարարագիր, իրականացվել է 38 վերստուգում: Միջին ցուցանիշը 7.9 օր է (2024թ. 3-րդ եռ.՝ 38 վերստուգում, միջին ցուցանիշը՝ 9.7 օր): Ըստ ոլորտների՝

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		3-րդ եռամսյակ, 2024թ.	3-րդ եռամսյակ, 2025թ.
1	**Դեղերի շրջանառություն**	10	10.5
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	14.3	9.2
3	**Սանիտարահամաճարակային**	7.3	6.9

[2] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում կիսամյակը:

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
(374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

	անվտանգության ապահովում		
4	**Աշխատանքային իրավունք**	7.3	8.5
5	**Աշխ. անվտանգություն**	0*	4.4

*Տվյալ ոլորտով ըստ անհրաժեշտության ստուգումներ չեն իրականացվել

2.2 Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

	ՈԼՈՐՏ	Ստուգումների ընդհանուր քանակ		Բարձր ռիսկ. ստուգումների քանակ	
		3-րդ եռ., 2024	**3-րդ եռ., 2025**	**3-րդ եռ., 2024**	**3-րդ եռ., 2025**
1	**Դեղերի շրջանառություն**	50	45	50 (100%)	45 (100%)
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	38	20	5 (13.1%)	3 (15%)
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	57	84	57 (100%)	84 (100%)
4	**Աշխատանքային իրավունք**	46	56	46 (100%)	56 (100%)
5	**Աշխ. անվտանգություն**	43	79	43 (100%)	79 (100%)

Բոլոր ոլորտների համար միջին ցուցանիշը կազմում է 83% (2024թ. 3-րդ եռ.՝ 82.6%):

2.3 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		3-րդ եռամսյակ, 2024թ.	**3-րդ եռամսյակ, 2025թ.**
1	**Դեղերի շրջանառություն**	13.7	13.5
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0*	13.2
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	13.9	13.6
4	**Աշխատանքային իրավունք**	14.8	14.9
5	**Աշխ. անվտանգություն**	13	13.3

*Ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ստուգումներ չեն իրականացվել՝ ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված:

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Բոլոր ոլորտների համար միջին ցուցանիշը կազմում է՝ 13.7 օր (2024թ. 3-րդ եռ.՝ 13.8 օր):



2.4 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

Ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվել էր իրականացնել 279 ստուգում, փաստացի հրապարակվել է 279 հանձնարարագիր: 2025 թվականի տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներից ավարտին է հասցվել թվով 195 ստուգում, որից 6-ն իրականացվել է 1-ին եռամսյակում, 108-ը՝ 2-րդ եռամսյակում, իսկ 81-ը՝ 3-րդ եռամսյակում հրապարակված հանձնարարագրերի հիման վրա: Կարգադրագրով տրված

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

առաջադրանքների կատարված լինելը պարզելու նպատակով հրապարակվել է 64 վերստուգման հանձնարարագիր: Ավարտին է հասցվել 69 վերստուգում, որից 31 վերստուգում իրականացվել է 2-րդ եռամսյակում, իսկ 38-ը՝ 3-րդ եռամսյակում հրապարակված հանձնարարագրերի հիման վրա: Ավարտին հասցված 69 վերստուգումների և 195 ստուգումների հարաբերակցությունը կազմում է 0.4:

2.5 Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Հաշվետու ժամանակահատվածում ստուգման ենթարկված տնտեսավարող սուբյեկտների կողմից Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացվել է 2 գրավոր բողոք, որոնցից մեկի մասով ընթանում է ծառայողական քննություն:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

Տարեկան ծրագրի համաձայն իրականացված ստուգումներ՝ 279, ըստ անհրաժեշտության ստուգումներ՝ 64, բոլորը բացառապես վերստուգումներ են:

Հարաբերակցությունը 1 : 0.23 է:

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



3.2 Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[3] .

Չափորոշիչը գնահատվում է տարեկան կտրվածքով:

3.3 Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

	ՈԼՈՐՏ	Մարդկային ռեսուրսներ	
		3-րդ եռ. 2024թ.	3-րդ եռ. 2025թ.
1	**Դեղերի շրջանառություն**	3.1	3
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0*	2.6
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	2.5	2.7
4	**Աշխատանքային իրավունք**	2.7	2.9
5	**Աշխ. անվտանգություն**	2.6	2.5

*Ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ստուգումներ չեն իրականացվել՝ ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Բոլոր ոլորտների ստուգումների միջին ցուցանիշը 2.7 է (2024թ. 3-րդ եռ.՝ 2.7):

[3] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



Ծախսված ֆինանսական միջոցներից հնարավոր է եղել հաշվարկել միայն գործուղումների ծախսերը, որը կազմել է 2 146 200 ՀՀ դրամ՝ 107 ստուգման համար:

Մեկ ստուգման համար ծախսված միջին գումարը կազմում է 20 058 ՀՀ դրամ: Ամենածախսատար գործուղումը կազմել է 177 000 ՀՀ դրամ:

(2024թ. 3-րդ եռ.՝ 1 257 183 դրամ՝ 90 ստուգման համար: Միջին ցուցանիշ՝ 13 969 ՀՀ դրամ: Ամենածախսատար ստուգումը կազմել է 195 000 ՀՀ դրամ):



ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

4.4 Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Տեսչական մարմնի դեմ բերվել է 135 բողոք, որից 41 բողոք՝ Տեսչական մարմին, 94 բողոք՝ դատարան: Ըստ վերահսկման առանձին ոլորտների, պատկերը հետևյալն է.

Ոլորտներ	Բողոքների ընդհանուր թիվ		Այդ թվում՝			
			Տեսչական մարմին		Դատարան	
	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ	2024 3-րդ եռ	2025 3-րդ եռ
Դեղերի շրջանառություն	39	40	5	3	34	37
Բժշկական սպասարկում	13	17	6	4	7	13
Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	7	18	3	7	4	11
Աշխատանքային իրավունք	60	56*	24	25	36	31*
Աշխ. անվտանգություն	2	6*	0	2	2	4*
ԸՆԴԱՄԵՆԸ	**121**	**135***	**38**	**41**	**83**	**94***

*1 բողոք 2 ոլորտով



ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Տեսչական մարմին ներկայացված 41 բողոքից.

- 10 բողոք բավարարվել/բեկանվել է,
- 20 բողոք մերժվել է,
- 1 դեպքում բողոքարկման վարույթը կարճվել է,
- 1 դեպքում բողոքարկման վարույթը կասեցվել է,
- 9 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:



Դատական կարգով բողոքարկված նախկին գործերի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կայացվել է **92** վճիռ/որոշում: Միաժամանակ, 1 դեպքում վարչական դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճվել է:

92 գործով վճիռներից 59-ը կայացվել է հօգուտ հայցվորի (64.1%), 3 դեպքում հայցը բավարարվել է մասնակիորեն: Ընդ որում՝ 92 վճռից 39 վճիռ կայացվել է վարչական, 29 վճիռ կայացվել է վարչական վերաքննիչ դատարանի կողմից, իսկ 24 վճիռ՝ վճռաբեկ դատարանի կողմից:

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am